ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 18/07

ք. Երևան «09» 07 2019թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Հակոբ Հակոբյանի, մի կողմից, և անհատ ձեռնարկատեր Գևորգ Հովհաննիսյանը (անձնագիր՝ AR 0680003, տրված 17.03.2018թ., 001-ի կողմից, հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Մաշտոցի 3 փկղ., տ. 3) (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ միասին նաև Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պարբերաբար հանձնարարում է կատարել ոսկյա իրերի շուկայական արժեքի գնահատում և Պատվիրատուին տրամադրել գրավոր հաշվետվություն (եզրակացություն):

1.2 Պատվիրատուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված պայմաններով ընդունել մատուցված ծառայությունը և վճարել դրանց դիմաց:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Կատարողից պահանջել ծառայությունները մատուցել Պայմանագրով սահմանված ժամկետներում.

2.1.2 Կատարողից պահանջել կատարելու Պայմանագրով Կատարողի համար սահմանված պարտականությունները:

2.2 **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Ընդունել մատուցված ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

2.2.2 Կատարողի միջնորդության դեպքում նրան տրամադրել գնահատման կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ:

2.3 **Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել ծառայությունների մատուցումը սկսելուց առնվազն մեկ օր առաջ տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:

2.3.2 Պատվիրատուից պահանջել ընդունել մատուցված ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

2.4 **Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Ապահովել Պայմանագրի առարկային վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը:

2.4.2 Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցել անձամբ, Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետներին համապատասխան:

2.4.3 Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցել Պայմանագրով սահմանված ժամկետներում:

2.4.4 Պատվիրատուին անհապաղ տեղեկացնել ծառայությունների մատուցումը շարունակելու անհնարինության մասին:

3. Պայմանագրի կատարման ժամկետները

3.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են գնահատման օբյեկտի և անհրաժեշտ նյութերի տրամադրման հաջորդ օրվանից հաշված 10 օրվա ընթացքում:

3.2 Եթե 3.1 կետում նշված ժամկետն անբավարար է ծառայությունների մատուցման համար, ապա առաջադրանքը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում, Կատարողը պարտավոր է Պատվիրատուի հետ համաձայնեցնել ծառայությունների մատուցման փաստացի ժամկետը:

4. Մատուցված ծառայության հանձնման-ընդունման կարգը

4.1 Կատարված աշխատանքները ընդունվում են Կատարողի և Պատվիրատուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, որը Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված, 2 օրինակից (հավելված 2), որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.3 Եթե Պատվիրատուն 4.2 կետում նշված ժամկետում չի ընդունում մատուցված ծառայությունը և (կամ) չի մերժում, ապա այն համարվում է ընդունված 4.2 կետում սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը:

5. Պայմանագրի գինը և վճարման կարգը

5.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված գնացուցակի համաձայն (հավելված 1), որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

5.2 Պայմանագրով նախատեսված մատուցված ծառայությունների դիմաց վճարելու հաշվարկները կատարվում են հետևյալ կերպ. Պատվիրատուն Կատարողին վճարումները կատարում է սույն պայմանագրի անբաժանելի մաս համարվող հանձնման-ընդունման անձանագրությունը ստորագրելուց հետո՝ գումարը կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.3 Կողմերը պայմանավորվում են, որ հարկային պարտավորությունների և պարտադիր վճարների հետ կապված հարցերի լուծման պարտականությունը դրվում է Պատվիրատուի վրա, եթե վճարման պահին Կողմերն այլ համաձայնության չգան:

5.4 Կատարողը պարտավորվում է Պայմանագրի կնքման օրվանից հետո՝ 1 շաբաթվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել բանկային հաշիվ, որին Պատվիրատուն կփոխանցի ծառայությունների դիմաց վճարները:

6. Պայմանագրի ուժի մեջ մտնելը, գործողության ժամկետը և վաղաժամկետ լուծումը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը:

6.2 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին մեկ ամիս առաջ մյուս կողմին գրավոր տեղյակ պահելով:

6.3 Եթե կողմերից որևէ մեկը Պայմանագրի ժամկետը լրանալուց առաջ գրավոր չի դիմում Պայմանագրով նախատեսված ծառայությունների դադարեցման մասին, ապա Պայմանագիրը համարվում է երկարաձգված անժամկետ:

6.4 Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, հայերեն լեզվով: Պայմանագրի մեկ օրինակը պահվում է Պատվիրատուի, իսկ մյուսը՝ Կատարողի մոտ:

6.5 Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ դրա գործողության դադարեցումն իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և նախատեսված ժամկետների պահպանման համար:

7.2 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Ծառայությունների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Վեճերի կարգավորումը

9.1 Պայմանագրի կատարման ընթացքում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

9.2 Պայմանագրով չկարգավորվող, բայց դրա կատարման հետ կապված այլ հարցերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	**Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյան**
ՀՎՀՀ 01223338 Հ/Հ 900013288023 Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41ա	ՀՎՀՀ 30966077 Հ/Հ 2475002764870000 «Արդշինբանկ» ՓԲԸ Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Մաշտոցի 3փկղ./տ.3 Անձնագիր՝ AR0680003, տրվ.17.03.2018թ., 001-ի կողմից:
ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար	
Կ. Հակոբյան	Գ. Հովհաննիսյան

Հավելված 1
«09» 07 2019թ. կնքված N 18/07 պայմանագրի

ԳՆԱՑՈՒՑԱԿ

1. Սույն հավելվածը հանդիսանում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և անհատ ձեռնարկատեր Գևորգ Հովհաննիսյանի միջև _____ կնքված N _____ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը:
2. Սույն հավելվածով սահմանվում են Պայմանագրի 1.1 կետով նախատեսված ծառայությունների գնացուցակը:
3. Գնացուցակ.

h/h	Չափման միավոր (հատ)*	Ծառայության արժեքը (ՀՀ դրամ)
1	1-6	6900
2	7 և ավելի	6900 գումարած 1000 վեց հատը գերազանցող յուրաքանչյուր մեկ հատի համար

*Մեկ զույգը համարվում է մեկ հատ

Պատվիրատու
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900013288023
Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41ա

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար

Հ. Հարությունյան

Կատարող
Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյան

ՀՎՀՀ 30966077
Հ/Հ 2475002764870000
«Արդշինբանկ» ՓԲԸ

Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Մաշտոցի 3փկղ./տ.3
Անձնագիր՝ AR0680003, տրվ.17.03.2018թ., 001-ի կողմից:

Գ. Հովհաննիսյան

Հավելված 2
«04» 07 2019թ. կնքված
N 18/07 պայմանագրի

Պայմանագրի կողմ
Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյան
ՀՎՀՀ 30966077
Հ/Հ 2475002764870000
«Արդշինբանկ» ՓԲԸ
Կոտայքի մարզ, գ. Առինջ,
Մաշտոցի 3փկղ./տ.3

Պատվիրատու
Հարկադիր կատարումն ապահովող
ծառայություն
ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900013288023
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41 ա

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները, աշխատանքները կամ ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների, աշխատանքների կամ ծառայությունների կատարման կամ մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Ardshinbank

ARDSHINBANK
Closed Joint-Stock Company
13 G. Lusavorchi str. 0015, Yerevan, Armenia
Tel.: (37412) 22 22 22, Fax: (37410) 56 74 86

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»
Փակ բաժնետիրական ընկերություն
ՀՀ, 0015, Երևան, Գ.Լուսավորչի 13
Հեռ.՝ (37412) 22 22 22, Ֆաքս՝ (37410) 56 74 86

Անուն, Ազգանուն/Անվանում/Name, Surname	ԱՁ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՏԻԳՐԱՆԻ / PE HOVHANNISYAN GEVORG TIGRANI
Անձնագիր/ՀՎՀՀ/Passport details/TIN	1830966077
Հաշվառման հասցե/Registration address	Աբովյան, ԱՌԻՆՋ 2210 ՄԱՇՏՈՑԻ 3 ՓԿՂ / Abovyan, ARINJ 2210 MASHTOTSI 3 PKGh
Փաստացի բնակության/գործունեության հասցե/Home/business address	Երևան, ԽՈՐԵՆԱՑԻ 24 / Yerevan, KHORENATSI 24
Հեռախոս և էլ.հասցեն/Phone number, e-mail	, , 43800003, GEVOR.KYAJ@MAIL.RU

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔ(ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ)/

BANK ACCOUNT STATEMENT(FOR THE PERIOD) St-.50-197165

Քաղվածքի և հաշվի մանրամասնություններ/Statement and account details

Քաղվածքի ձևավորման ամսաթիվ/Statement creation date	02/07/19	Հաշվի համար/Account number	2475002764870000
Քաղվածքի ժամանակահատված/ Statement period	01/06/19 - 30/06/19 (30 օր/day)	Հաշվի տեսակ/Account type	Հաշվարկ.հաշիվներ
Նախորդ քաղվածքի ամսաթիվ/ Previous statement date	02/06/19	Քարտի համար/Card number	
Քաղվածքի տրամադրման ամսաթիվ/ Statement provision date	02/07/19	Քարտի տեսակ/Card type	
Քաղվածքի ամսաթվին նախորդող վերջին գործարքի ամսաթիվ/ Last transaction date before statement date	29/05/19	Հաշվի արժույթ/Account currency	AMD